

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ 4 մր. 8 Մճ.
Գաւառաց 10 Մճ.
Վեցամսեյ Կ. Պոլսոյ 4 Մճ.
Գաւառաց 5 Մճ.
Դրանցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գալով յապաղուած անհոգ
ծախքը խորագրութեան վրայ է :
Լրացրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագիր
— Տնարկին պիտի ուղղուի : Ղալա-
թիս Կանտորքըլար ճառարի թիւ
198 : Կորս խան : Մասիսի գրասեն-
եակի :
Ճանաչու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 27 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Տնտեսական խորհուրդն յառա-
ջիկայ հինգշաբթի օրը՝ յունիս 1/13
ին՝ պիտի գումարի՝ Արեւելքը խաղա-
ղելու և բարենորոգելու ամենաբարձ-
րագործ խնդրոյն վրայ խորհելու հա-
մար : Արդէն լրագրիւր զանազան ծը-
րագրեր կը հրատարակեն իբրեւ տե-
րութեանց յատակագիծը, բայց ոչ
ոք կրնայ ըսել թէ՛ սրն է ստորդը :
Անգղիոյ և Ռուսիոյ մէջ համաձայ-
նութիւն հաստատուել է քանի մը
գլխաւոր կէտերու վրայ, և կերեւի
որ Շուվալովի կողմէ վերջնական հրա-
հանգներն ստանալու գնացած է 'ի
Բեդրասպուրկ : Կըսուի թէ Բեդրաս-
պուրկի մէջ իւր առաջին ուղեւորու-
թեան ժամանակ երբ կայսրը կը հա-
մոզէր ղեկավար ընելու և Այսթէ-
ֆանոսի դաշնադրութեան մէջ բա-
րեւիտութեանց սկզբունքն ընդու-
նելու, ազդեցութեան տէր մեծ մաս
մ'իրեն դէմ սաստիկ յուզուած էր,
և ինքնաթիւն զօրավարին իւր ազա-
րակն երթալն ալ այս պատճառէն
յառաջ եկած կը համարուի : Պալա-
տականաց ակումբներու մէջ անգամ
Ռուսիոյ ղեկավարներուն դէմ կը խօս-
ուէր և ազդային թերթերն ալ կը
մերժէին զանոնք : Բարեբաղդաբար
Չարին խորհուրդներուն մէջ իմաս-
տութիւնն ու չափաւորութիւնն յաղ-
թող ելած կը կարծուի, որով Եւրո-
պիոյ ներդաշնակութիւնը միասին
գլխի բուն կերպիւր չխանգարիր
նորէն պատերազմ և արեւահեղու-
թիւն ծագելով :

Գործը կը մնայ այժմ՝ Պետական
մարդոց, որք քանի մ'օրէն կանաչ
օթոցով ծածկեալ գրասենտանի մը շուր-
ջը պիտի գումարին՝ Եւրոպիոյ և Ա-
սիոյ կարեւոր մէկ մասին և անոր մէջ
բնակեալ զանազան ազգէ և կրօնքէ
ժողովրդոց բաղդն որոշելու համար :
Դժուարին խնդիր, որ աշխարհագրեա-
նեւուն բոլոր տաղանդին պէտք ու-
նի : Թուղթի վրայ շատ ծրագրեր
կրնան շինուիլ, ինչպէս ասկէ առաջ
եղած են, բայց ազգաց բաղդն ի-
րենց ձեռքն է, և շատ անգամ ի-
րենք իրենց դժբաղդութեան պատ-
ճառ կըլլան՝ սխալմամբ, սոքիսու-
թեամբ, ազգային կիրքերով, ինչպէս
որ իրենց յառաջդիմութեան և զար-
գացման հեղինակներն ալ իրենք
են : Եթէ կրնայ տուն մը զարգանալ
միմիայն մերձաւոր կամ հեռաւոր
գրացեաց և բարեկամայ խորհրդով,
կարելի է կատարեալ յոյս դնել որ
երկիր մը ճոխանայ տնտեսական խոր-
հուրդներով : Ահա տանուտէր մը,
որ հարուստ և չքեղ ժառանգութիւն
մ'ունի : Բայց սա ծագելալ վիճակի

մէջ չդառնուիր բաղմամբիւ ներքին և
արտաքին պատճառներով : Երգաւոր-
խութիւնը և պատերազմունք անոր
մեծագոյն մասն յաւեր դարձուցած
են, մնացեալ մասերը սաստկապէս
մնասեալ, և դորձաւորաց ամենն ալ
կամ դժգոհ, կամ գործելէ վհատ-
եալ, կամ տարազիւ, կամ ապրս-
տամբ և կամ իրարու դէմ թշնամաց-
եալ : Եւ սակայն դրացիները խոր-
հուրդ տալէ դարձած չէին, և գո-
վելի եռանդեամբ նորէն կը գումա-
րին՝ անոր վիճակին և բարենորոգ-
ման վրայ խորհելու :

Փարիզի դաշնադրութեան ժամա-
նակ մեծ տնտեսութիւնները թուրքիոյ
“ամբողջութիւնն ու անկախութիւնն”
երաշխաւորած էին : Ներկայ տէրու-
թեանց խորհրդոյն ժամանակ պիտի
պարտաւորին՝ հակառակ մինչև ցարդ
'ի դորձ դրուած զեղումներու և
նուազումներու՝ տակաւին փոփոխու-
թիւն մ'ընդունիլ ամբողջութեան ըս-
կըղբանց : Վասն զի նոյն իսկ Անգլիա
ուրիշ բանի չձգելով, բայց եթէ Սեր-
վիոյ և Գարաապի ձեռք բերելիք
հողային վարձատրութիւնները կա-
րելի եղածին չափ նուազեցնել, և
Ռուսիոյ պահանջած պատերազմական
տուգանքն և հետեւաբար առնելիք
հողը գեղջել : Սակայն նախկին ամ-
բողջութեան սկզբունքը չպահուիլ,
և չենք զիտեր թէ ասկէ վերջը մը
նացեալ մասերուն նկատմամբ երաշ-
խաւորութիւն մը պիտի ըլլայ թէ ոչ
իսկ անկախութեան սկզբունքն այն-
չափ պիտի վնասի, որ խորհուած
ծրագրերուն մէջ թուրքիոյ բարենո-
րոգմանց վրայ հսկողութեան իրա-
ւունք մը վերապահել կուզուի Եւրո-
պիոյ :

Բայց բարենորոգումներն և անոնց
գործադրութիւնն երաշխաւորելիք
հսկողութիւնն ինչպէս պիտի կար-
գադրին : Ասիկա աշխարհագրեաներն
իսկ ապշութեան մէջ կը ձգէ : Շատե-
րու կարծիքն է թէ ինքնօրինութեան
սկզբունքը բաւական է ամեն դժ-
ւարութիւն լուծելու : Թէ գաւառա-
կան ինքնօրինութիւնն ամեն բան կը
վերջացնէ : Ըստ մեզ այս եղանակը կը
մնայ օգտակար ըլլալ այն գաւառաց մէջ
ուր ժողովուրդը համասեւ է, կամ
գոնէ համազօր և համասեւ մեծա-
մասնութիւն մը կայ, բայց Կ. Պոլսոյ
Անգլիական դեպուտտ Պ. Լէյքըրտ իւր
ապրիլ 1 թուով մէկ ծանուցադրին
մէջ կըսէ թէ Ալպանիայի էֆէնտի մը,
որ Գրան պաշտօններու մէջ գտնուած
է, իրեն յիշատակագիր մը ներկայա-
ցուցած է, որ “օրինակ կրնայ ըլլալ
կրօն, “ինքնօրինութիւնը” թուրքիոյ
զանազան ցեղերուն զանգատանաց
իրեւ դարման համարիլը քաջալերե-
լէ ծագելիք վտանգին : Ալպանիա-
ցիներն (Ալանալուս) ևս ինքնօրինու-
թիւն կը պահանջեն, և կը բողոքեն

իրենց երկրին մէկ մասին Ռուսիոյ
կողմէն Պուլղարաց իշխանութեան
ներքեւ դրուելուն դէմ : Ալպանիայի
պիտի պատերազմին մինչև որ իրենց
երկրը Պուլղարաց ձեռքէն ազատեն-
ցիչեալ էֆէնտին յայտարարեւ է նա
և թէ թուրք իշխանութեան անկումն
Արեւելեան խնդրոյն վերջ չպիտի տայ,
այլ անոր սկզբնաւորութիւնը պիտի
ըլլայ : “Այս պարտին կարծիքը կըր-
նայ շատ արժէք չունենալ, կը յարէ
Պ. Լէյքըրտ, բայց Եւրոպական թուր-
քիոյ մէջ զանազան սեռերու և կրօ-
նից իրարու դէմ ունեցած ատելու-
թիւնն ու նախանձը կը ցուցնէ, յոր-
մէ կրնայ տեսնուիլ թէ քրիստոնեայ-
ները զիրար ջարդելէ արդիւր իշխա-
նութեան մը, որչափ գէշ որ եղած
լինի, անկման հետեւանքն ինչ կըր-
նայ ըլլալ : Հաւանականաբար ինքնօ-
րինութիւնը կրօնական ատելութիւն
ները բուժելու դարման չկրնար ըլ-
լալ : ”

Նոյն դեպքանն ապրիլ 17 թուով
իւր ուրիշ մէկ ծանուցադրին մէջ
Յունական Սիլլոդոսի (գրական ընկե-
րութեան) ներկայացուցած մէկ յիշա-
տակագիրը Լորտ Սայրիգլըրին հաղոր-
դելով Յունաց ազգայնութեան պա-
հանջմանց վրայ կը խօսի և կըսէ :
“Այս ազգայնութեան խորհրդածու-
թիւններն արժանի են տեսականաւ
և եթ զբողոք եռանդոտ վարժապետ
ներու, բայց գործնական աշխարհա-
վարութեան չըմբռնէ մէջ ծանր վը-
տանգի և շփոթութեան աղբիւր կըր-
նան ըլլալ : Եթէ տէրութիւն մը բաժ-
նել պէտք ըլլայ իւր դրացեաց կող-
մէն՝ իւր զանազան ժողովրդոց աղ-
գայնութեանց համեմատ, քիչ տե-
րութիւններ կրնան բաժանուիլ աս-
գատիլ : Մեծն—Բրիտանիա իսկ չկըր-
նար բաղաւորութիւն մ'ըլլալ : Դժբաղ-
դաբար հիմա այս սկզբունքը գոր-
ծադրել կուզուի այնպիսի երկրի մը
վրայ, որուն բաղդն եղած է ամեն
երկրէ աւելի աշխարհակալ և վերա-
նաբնակ ցեղերու արշաւանաց ենթա-
կայ ըլլալ : Բոլոր Օսմանեան կայսրու-
թիւնը ժողովրդոց մասերէ բաղկաց-
եալ է, որոց թուումն իսկ ծանուցա-
դրոյս սահմանին մէջ կրնար պար-
փակիլ : Զանոնք գումարել և միացը-
նել ջինական առեղծուած մը լուծե-
լէ առաւել դժուարին է : Բայց պե-
տական մարդու մը դործն այս չէ,
այլ ամեն երեւակայական և ազգա-
բանական տեսութիւններն 'ի բաց
թողով, ամեն մարդոց համար, ինչ
սեռէ և կրօնքէ և ըլլան, բարի, ար-
դար և հաւասար կառավարութիւն
մ'ապահովել է : ”

Այս տեսութիւնը ճիշդ կրնայ ըլ-
լալ, բայց նոյն իսկ Պ. Լէյքըրտի դը-
րած սկզբունքը բոլոր խառնութեան
գործադրել, այսինքն ազգայնութեան
նկատումներն 'ի բաց թողով խնդի-

րը լուծել անհնար է : Օսմանեան կա-
ռավարութիւնն իւր ամենահզօր ժա-
մանակներն իսկ ազգայնութիւններն
ու կրօններն անտես ըրած չէր, և Կ-
Պոլսոյ առման ժամանակ անգամեր-
կու գլխաւոր ոչ—իսլամ հասարակու-
թիւն ճանչած էր, Հայերն և Յոյներն,
որոց Պատրիարքներուն տրուած կայ-
սերական Ֆէրմաններն ու Պէրաթներ-
րը բաւական ընդարձակ արտօնու-
թիւններ կը պարունակէին, արտօ-
նութիւններ, որք եթէ կատարեալ և
լիով գործադրութիւն առնուն, շատ
մը գանդատներ կրնան անհետանալ
Բաց ասկէ, պետական մարդիկ
պէտք է նաև նկատարութեան առ-
նուն որ աշխարհ փոփոխութեան մեջ
է : շարունակ բարեփոխու . յառաջ
երթալու, նորոգուելու կարօտ է :
Ընդհանուրին բաղձանքն յառաջդի-
մութիւնն է, զոր առանց անպատե-
հաութիւններ յարուցանելու կարելի
չէ անտես ընել :

Արդ, քանի որ Արեւելք այսօրուան
օրս մեծ յեղափոխութիւն մը կը կը-
րէ, թէ՛ քրիստոնեայք և թէ՛ իսլամք
պէտք է որ այս տաղանապէս դուրս
երևան իրենց շահուց պիտոյից և ըզ-
գացմանց կատարեալ գոհութիւն
ձեռք բերելով : Այն մեծ աշխարհա-
գէտներն, որք քանի մ'օրէն 'ի խոր-
հուրդ պիտի գումարին Արեւելեան ազ-
գաց և ժողովրդոց բաղդը անօրինե-
լու համար, և որովհետեւ իրենց գու-
մարման գլխաւոր նպատակն Արեւելից
մէջ խաղաղութիւնը հաստատելով Եւ-
րոպիոյ շահերն ապահովել է, պէտք
է քաջ խելամուտ ըլլան որ ընդհա-
նուրին գոհութիւն չընծայող որ և է
կարգադրութիւն՝ իրենց նպատակին
բացարձակապէս հակառակ արդիւնք
կարտագրէ :

Տարած շուրջն աննախատես իշ-
խանութեան մ'աչքին առջև վայրագ-
ցեղերու գիզած աւերակներուն վրայ
լացող Հայը, նոյնպէս Պալքանի ստո-
րոտը վերջին յեղափոխութեանց զոհ
գնացող իսլամ և Յոյն ժողովուրդք,
վերջապէս, ամեն ուր որ օրինաւոր
շահեր կան, որք իրենց գոհացումը
կ'ապաստեն, սմանք դէն 'ի ձեռքն, ո-
մանք 'ի դէն դիմելու մտադիր, պէտք
է որ ամենն ալ իրենց արդար բաժինը
ձեռք բերեն : Տնտեսական խորհրդ-
դոյ աշխարհագրեաները պէտք չէ մոռ-
նան, որ այսօրուան օրս պաշտօնա-
կան աշխարհէն դուրս յեղափոխական
աշխարհ մը կայ, որ օր քան զօր իւր
սահմաններն ընդարձակելու կը նը-
կըրտի : Այդ յեղափոխական աշխարհն
ամեն տեղ տարբեր ձևերով իւր ար-
բանեակներուն վաշտերն ստուարա-
ցնելու կաշխատի՝ ամեն հրապու-
րանք ընծայելով պաշտօնական աշ-
խարհի ժառանգութեան զուրկ թող-
ուած տարրերու : Արդէն փորձով
տեսնուած է, որ այդ յեղափոխական

աշխարհը նոյն իսկ պաշտօնական աշխարհի տալիս առջև և անոր կամայ և չանկի հակառակ գործել գիտէ։ Եթէ՝ Արևելեան խնդիրը լուծելու կոչումը մեծ մարմինն այս կէտերը լուրջ նկատարութեան չառնու, առարկայ չկայ, որ պաշտօնական մարմիններն որչափ ճիշդ և զորութիւն լծալեն, բան մը կայ, որուն գէտ կարող չպիտի ըլլան թուաբար, այն է յեղափոխական տարերաց ծաւալման, որոյ գիրքը նոյն իսկ իրենք պիտի ձգեն բոլոր այն ազգերն ու ժողովուրդներն, որք իրաւունք ունենին այդ կարգադրութեան մէջ իրենց շահուց գոհութիւնը գտնելու, կամ ինչպէս կըսէ Պ. Լէյբրա, բարի արդար և հաւատար կառավարութիւն մ'ստանալու, բայց աշխարհագրական աննախատեսութեամբ կամ թուրութեամբ ձեռնունայն երևելով, սերի բան չմտար իրենց ընել, այլ միայն իրենց յուսահատութեան լծադրութիւններուն անընդմիակաց հոսանքին առջև իյնալ։

Ուստի կը սիրենք յուսով որ տէրութեանց խորհուրդը կազմող նշանաւոր աշխարհագէտք այս ծանրաւ կը շինուին կէտերը չեն վերաբերեն իրենց ուշադրութեան։

Անցեալ շաբթու հեռագիրն Անգղիական կրօնական մէկ հրատարակութիւնը կը յիշէր, որ Ռուսիոյ և Անգղիոյ միջև դադարած համաձայնութեան կէտերը կը ծանուցանէր։

Վերջին թղթաբերով եկած Եւրասիական լրագիրքը կը պահէ հրատարակութիւնը բերած բոլորով արժանի կը համարենք իրեն պարզ տեղեկութիւն հրատարակելու առանց վաւերականութիւնն երաշխաւորելու։

1. Պոլսոյ արտաքին գործերը հիւսիսային կողմն յատուկ իշխանի մը կառավարութեան ներքև, միսն ալ Պալքանայ հարաւային կողմն, (առանց եղբայրան ծով հասնելու) քրիստոնեայ կուսակալի մը կառավարութեան ներքև։

2. Այս երկրորդ համաձայնութեան զորքերը դուրս պիտի ելնեն՝ մէկ մ'ալ չգառնալու պայմանաւ։

3. Անգղիացիներ կը յայտնէ, բայց չեն զիջում անոր Պետարապոլի Ռուսիոյ ետ տրուելուն։

4. Անգղիա իրաւունք կը վերապահէ իրեն՝ Դանուբի վերաբերեալ միջազգային կարգադրութեանց վրայ վերահսկելու։

5. Պաթմոս մ'ուսից կը թողուի, Հայաստանի կազմէն ուրիշ երկիր չառնելու պայմանաւ։

6. Ռուսիա՝ Անգղիոյ խնդրանքը Պալքանայ թուրքերից կը թողուի՝ խոստովանելով իրենց պատահելը՝ Պաթմոսի տուգանաց ինչ կերպիւ վճարուելու տէրութեանց խորհուրդը պիտի որոշէ։

7. Ռուսիա կը խոստանայ պատերազմի տուգանաց փոխարէն երկիր չպահանջել, ոչ ալ փութելուին Անգղիոյ իրեն պարտաւէր՝ ընելիք պահանջմանց խառնուրդ։ Պատերազմի տուգանաց ինչ կերպիւ վճարուելու տէրութեանց խորհուրդը պիտի որոշէ։

8. Եպիքոս, Թեսալիա և այլ Յունական դաւաճները վերականգնելու համար տէրութեանց խորհուրդը միջոցներ պիտի տնօրինէ։

9. Դարդանելի և Սի ծովու նեղուցներուն անցուղիներն առաջնական վիճակին մէջ պիտի մնան։

10. Անգղիա կառավարիչ տէրութեանց խորհուրդն, որ Եւրոպայ վերականգնելու զորքերն և իրեն վերապահէ այդ երկրին Ռուսերէն գրաւուելուն ինչպէս նաև Ռուսական զօրաց Բուսանիոյ մէջէն անցնելուն խնդիրներն որոշել։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 4 յունիս առաւօտ։ Կայսեր վիճակը կը ծանրանայ։ Վերջին երեւոյթում, ուստի կենացը համար կը վախճուի։

Ոճրագործը խոստովանութիւններ ըրաւ։ Իւր յայտարարութիւններէն կը հասկնայ թէ՛ կայսրն սպաննելու համար նիւթաւ գաւազնուածքով մ'աշխատէ եղբոր։ Ոստիկանութիւնն ամեն ջանք ի գործ կը դնէ և ամենախիստ միջոցներ ձեռք կ'առնու զաւազիւրները բռնելու համար։ Կիբակի աւուր ոճրագործութիւնը նախընթացին հետ կապակցութիւն ունի։ Ոճրագործն, որ ինքզինք վերաբարձ էր ծանր վիճակի մէջ է։

Պէրլին 4 յունիս իրիկուն։ Ամեն տէրութիւնը ընդունեցին յունիս 15ին բացուելիք տէրութեանց ժողովոյ հրաւերը։

Կայսեր վրայ այսօր հրատարակուած բժշկական տեղեկութիւնը կըսէ թէ բարւոյ վիճակի մէջ է միշտ։

Ոճրագործն՝ իւր վերջին ծանրութեան հակառակ դեռ կայսրի բաց խօսք անհրաժեշտ է իրեն։

Երէկ գիշեր շոր մարդիկ բռնուեցան թագաւորին դէմ՝ դաւաճանութիւն նկատելով ըլլալու պատճառաւ։

Համ 4 յունիս իրիկուն։ Պապն իւր ցաւակցութիւնն յայտնող հեռագիր մը գրեց Գերմանիոյ կայսրի։ Կարդնալ Գրանքի՝ Պապին հրամայեց հրահրել գրեց Գերմանիոյ կայսրին որպէս զի ընկերակալութեան դէմ մարտնչէ։

Կառավարութիւնը ծանուց երեսուխանական ժողովին թէ 1881 ին Համի մէջ համալսարանական արուեստահանգէս մը կազմելու դիտարկութիւն ունի։

Խորհուրդ 4 յունիս։ Խորհուրդարանը ծախսահարկութեամբ ընդունեց կառավարութեան յայտարարութիւնն, որով կը ծանուցանէր թէ Անգղիա պիտի մասնակցի տէրութեանց խորհուրդին։

Լորտ Պիքսթոնֆիլտ յունիս 8 ին և Լորտ Սալիսբուրի ալ յունիս 10 ին Պէրլին պիտի երթնան։

Փարիզ 4 յունիս։ Արտաքին գործոց նախարար Պ. Վատինիլիս իւր պատմաստան գլխոյն և աշխարհավարական գործոց տնօրէնին հետ շաբաթ կամ կիրակի Պէրլին պիտի երթայ տէրութեանց խորհուրդին ներկայ գտնուելու։

Պէրլին 5 յունիս։ Կայսեր վիճակին վրայ հրատարակեալ բժշկական օրագրութիւնը կը ծանուցանէ թէ Կ. Վ. Վեհափառութիւնն այս գիշեր հանգիստ անցուցեր է և թէ ընդհանուր վիճակը գոհացուցիչ է։

Լոնտոն 6 յունիս։ Թագուհին բազմեցաւ կարգի մեծ խաչանշանը զրկեց Կ. Պոլսոյ դեսպան Պ. Լէյբրա։

Պէրլին 6 յունիս։ Մօնիթէօր լրագիրը կայսերական հրամանագիր մը կը հրատարակէ, որով կայսրը գահաժառանգ կայսրորդուին կը յանձնէ՝ զինքը փոխանորդել և պետական գործերը վարել մինչև որ ինք առողջանայ։

Ազգային կազմ լրագիրն երեսուխանական ժողովոյ բազմութիւն անդամներէ տարաբնակ գիր մը կը հրատարակէ, որոյ մէջ ասուած է թէ կայսեր վրայ փորձուած արտաքին ոճրէն ետեւ պատրաստ են ամենընդարձակ արտաքին կարգի իշխանութիւններ տալ կառավարութեան, որպէս զի երկիրը պահպանէ և կայսերական դերը պատանդ պաշտպանէ։

Բեղադարձ 6 յունիս։ Կորնթոսի իշխանն առողջացած ըլլալով կերակր առաւօտ Պէրլին պիտի երթայ։

Լոնտոն 6 յունիս։ Երեսուխանաց ժողովին մէջ՝ ծախսակալութեան առաջին Լորտ՝ Պ. Միթլը ասու թէ իրիկուն Անգղիական նաւատորմը քիչ օրէն Իշխանաց կողմնակողմն Ժողովարի երթայ ուղիպահի պատճառներով։

Պէրլին 7 յունիս։ Կայսեր վիճակը լաւ է։ Գանի մ'անձանց սպանական նաւակներ զրկուած են։ Երէկ քանի մը խաղաղութիւններէ ետեւ ձերբակալութիւնը եղան։

Պալմար իշխանը Բրուսիոյ երեսուխանական ժողովին լուծումն առաջարկեց։

Լոնտոն 7 յունիս	
Օտ. Բոն.	14
Փոլ.	4865 15 1/2
»	1869 15 5 8
»	1871 45 3/4
»	1872 26
»	1873 14 1/2
»	1874 71
Անգլ. Բոն.	96 1/16

Փարիզ 7 յունիս։ Օտ. Բոն. 14 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեքշաբթի օրը ժամը 10ին միջոցները, մինչդեռ Մեծ-Եպարքոսը նախարարաց խորհուրդին կը նախագահէր, արքունի պալատան սրճապետը (Դահլէճի Պաշին) Բ. Դուռն երթալով Եպարքոսական կնիքն ետ առաւ Մէհմետ Րիշաի փաշայէն։

Երկու ժամ վերջը նորընտիր Մեծ Եպարքոս և միանգամայն արտաքին գործոց նախարար Բարձր. Սաֆիէթ փաշան կայսերական պալատէն հանգիստ Բ. Դուռն եկաւ, և հոն հետեւալ խօսքով կարգադրուեցաւ։

« Իմ մեծաշուք վէզիրս Սաֆիէթ փաշա։

« Բիւշտի փաշային Մեծ-Եպարքոսութեան հանուիր հարկ ըլլալով, այդ պաշտօնը ձեզ յանձնել պատշաճ դատեցի՝ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնին հետ Միանգամայն մեր Տարի Շուրայի խորհուրդին նախագահ Մուսթաֆա (Յոսֆօր մակառնուհեալ) փաշան պատեւազմական գործոց նախարար անուանեցի իւր հետ թեան ու հմուտութեանը պատճառաւ։

« Ներկայ դժուարին պարագայից մէջ մեր ամեն հպատակաց և ժողովրդաց անդորրութիւնն ու աներկն անութիւնն ապահովելու, երկրին բարգաւաճանքն ու հարստութիւնն իրացնելու համար հարկ եղած ամեն միջոցներուն գործադրութիւնը Մեր Սահմանադրութեան անվիճար պահպանութիւնն և սահմանադրական տրամադրութեանց գործադրութիւնը Նիշադի զաւարտանաց անյապաղ բարեկարգումն, որպէս զի վստահութիւն ազդեն ամենուն։

« մեր ամեն հպատակաց անխորտարաւ լուծիւն բաշխելու ամենամեծ ուշադրութիւն, բարեկամութեանց հետ մեր Բ. Դուռն ունեցած բարեկամական անկեղծ յարաբերութեանց ամբարշտումն, ասանք են մեր կայսերական իրաւունքն ու բարձրանքներն, որոց իրականացման համար պիտի աշխատիք մեր միւս նախարարաց հետ համաձայնութեամբ։

« Բարձրեալն Աստուած յաջողութիւն պարգևէ ամենեցուն։ »

Կայսերական հրամանաւ՝ Բեռլին փաշան թիւգանթարանի վերատեսուչ անուանեցաւ փոխանակ Ղադի Ահմետ Մուսթաֆա փաշային, որ կայսերական զօրաց սպայակոյտի նախագահութեան պաշտօնը միայն պիտի շարունակէ։

Դարձեալ կայսերական հրամանաւ՝ Անկէյ 25-30 տարի առաջ Սուլթան Ապտուլ Մեհմետ կայսեր առաջին սենեկապետութիւն և ետքն ալ գաւառաց կուսակալութիւն ըրած Համի փաշան առաջին սենեկապետ անուանեցաւ։

Իսկ նախորդ առաջին սենեկապետ Հասան պէյ կայսերական գանձուն գրան գործակալ անուանեցաւ։

Յէրիք Խալիլ փաշան Վեհ. Սուլթանին առաջին անձնապահապետ անուանեցաւ։

Մասպալի կայսերական զօրաբանակին հրամանատար Մէհմետ Ֆուատ փաշային Միշիքութեան աստիճան տրուեցաւ։

Երէկ Ուլաճիկի արարողութիւնը Մէհմետի միջոցով կատարուեցաւ։

Տէրութեանց խորհուրդին մէջ Բ. Դուռն Ա. երեսուխան կամ պատուիրակ անուանեցաւ Վսեմ. Սատրապ փաշան, և երկրորդ պատուիրակ անուանեցաւ արտաքին գործոց նա.

խորարի խորհուրդական Ալեքսանդր Գարաթատուրի Էֆէնտին։

Սոյն երկու լիազօր պատուիրակներն այսօր ճանաչալ պիտի ելնեն։

Ճէրիտէի Համալտիս կը ծանուցանէ թէ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարներէն Օտեան խալիլ Էֆէնտի, Գարաթաշան կարապետ Էֆէնտի և Աթա պէյ Օսմանեան լիազօր պատուիրակաց հետ պիտի երթան քարտուղարութեան պաշտօնով։

Անգղիոյ թագուհին՝ Ալի Սուլթանի գաւազնութեան շուտով զսպրելուն համար իւր խնդակցութիւնն յայտնեց Վեհ. Սուլթանին՝ մայրաքաղաքի անգղիական դեսպան Պ. Լէյբրաի միջոցաւ։

Եւրոպական միւս վեհապետք ալ սոյն առթիւ խնդակցութիւն ու համալրութիւն յայտնեցին Սուլթանին։

Վեհ. Սուլթանն արքունեաց բարձրատիճան պաշտօնատարներէն մին մայրաքաղաքի Գերմանական դեսպան Տը Ռայս իշխանին զրկելով իւր խոր ցաւակցութիւնն յայտնեց Գերմանիոյ կայսեր անձին դէմ գործուած դաւաճանութեան վրայ։

Մայրաքաղաքի յունական թըրաքի անուն լրագիրը կը ծանուցանէ թէ Յունաց Պատրիարքն հինգշաբթի օրը Գերմանիոյ Վիլհէլմ կայսեր հեռագիր մ'ուղղելով, իւր և համբէն Յունաց ազգին կողմէ խորին ցաւ յայտնեց Ե. Կ. Վեհափառութեան կենացը դէմ փորձուած նողկալի դաւաճանութեան վրայ, և միանգամայն իւր ջերմ ուրախակցութիւնն յայտնեց անոր կենաց պահպանութեան վրայ։

Թիւրքալ լրագիրը կը ծանուցանէ նաև թէ վաղը կ'ընկնէ Ֆէնէրի յունաց Պատրիարքական եկեղեցւոյն մէջ գահաբանական աղօթք պիտի կարդացուի, որուն ներկայ գտնուելու հրաւիրուել են Բայս իշխանն և այլ տէրութեանց դեսպաններն։

Կը յուսանք որ մեր Պատրիարքարանն ալ այս քաղաքավարական պարտականութիւնները կատարելու անխորտ գտնուած չէ։

Խալիանեալ Լէվնթ շէրքու լրագիրն տնօրէն Պ. Վիթէյքէր Անգղիային հրաման եղաւ Բ. Դուռնն որ 48 ժամու մէջ թուրքիոյ հողէն դուրս ելնէ, բայց յետոյ՝ իւր գործերը կարգադրելու խնդիր մատուցանելուն վրայ քանի մ'օր մնալու թոյլտուութիւն եղաւ։

Թղթադարմաց բարձման յանձնաժողովը կը ծանուցանէ թէ ալիւրի արոց հասցիքը մինչև չորեքշաբթի 8.816.740 զրշի հասեր է։

Երեքշաբթի օրն Անասուլ Հիսար, չորեքշաբթի օրն ալ մայրաքաղաքի Գիւլիւր Այասոֆիա թաղը հրդեհ պատահելով, առաջինն հինգ ժամ տեւեց և քանի չափ խոշոր շէնքեր մակր դարձուց, երկրորդն ալ երեք ժամ տեւեց և վաթսուներեք չափ տուն ու խանութ աղբից։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶՄՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
26 մայիս ուրբաթ իրիկուն	14.17
27 մայիս շաբաթ առաւօտ	14.7
բացուեցաւ	14.13
ժամ 6 ին	46.50
Բուսիլի երկաթուղի	47.28
Թղթադարմ	278

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Անգղիոյ խորհուրդարանին ներկայացեալ կառավարական վերջին դրութեանց մէջ Լորտ Սալիսբուրի հետեւեալ մէկ հեռագիրը կը գտնենք ներկայ մայիս 11 թուով մայրաքա.

զաքիս Անդղիտիան դեպի Գ. Լե-
յրբորի ուղղեալ .

« Պարոն . Գեր . Մկրտիչ Խորիմեան
արքեպիսկոպոս Տարօնոյ և նախորդ-
Պատրիարք Թուրքիոյ Հայոց , երէկ
տեսակցութեան եկաւ ինձ : Այցե-
լութեան նպատակն էր վախճալ յայտ-
նել որ Հայոց շահերն ալ նկատողու-
թեան առնուին տէրութեանց ժողո-
վէն , և իրենց հասարակութեան հա-
մար լաւ կառավարութիւն մը հաս-
տատուու և փերտերուն հարստա-
հարութեանց և բռնութեանց դէմ
զիրենք ապահովելու համար միջոցներ
'ի գործ դրուին : Մասնաւորապէս
յայտնեց ինձ թէ Գրան դէմ թշնա-
մական մտքով չէր խօսեր . թէ իւր
ժողովուրդն Օսմանեան կայսրութե-
անէն բաժնուելու դիտաւորութիւն
չունի : Հայաստանի թուրք բնակիչը
ևս հաւատարապէս կը հարստահարին
անօրէն փերտերէն : Ես ալ՝ վեհ
Թագուհոյն կառավարութեան առ-
Հայ հասարակութիւնն զգացած ան-
կեղծ համակրութիւնն իրեն յայտ-
նելով՝ ապահովեցի զինքը թէ մեր
բոլոր ջանքն 'ի գործ կը դնենք ի-
րենց վիճակը բարւոյն . բայց
հարկ չհամարեցայ տէրութեանց խոր-
հրդոյն կողմէն գործադրելի մաս-
նաւոր միջոցներու նկատմամբ խոս-
տումներ տալ : »

Լոնտրայէն մայիս 18/30 թուով
գրուած նամակ մը հետեւեալ տեղե-
կութիւնները կուտայ Խորիմեան սըր-
բազանին առած այցելութեանց և
իրեն եղած ընդունելութեանց վրայ .
« Նախ քէն թուրքերի արքեպիսկո-
պոսին (որ Անդղիտի ամենէն բարձ-
րաստիճան եկեղեցականն է) այցե-
լութիւն տուաւ , որ զինքն արտաքոյ
կարգի պատիւներով ընդունեց և
առաւ Լորտերուն խորհրդարանը
տարաւ , ուր թագուհոյն գահայից
պատուանդանին վրայ կենալու հրա-
ւիրուեցաւ . Ն. Սրբազնութիւնն , և
իւր արեւելեան պատկառելի կերպա-
րանօքը մեծ տպաւորութիւն ըրաւ
Լորտերուն վրայ :

« Ն. Սրբազնութիւնը Լոնտրայի մէջ
Աւստրիոյ դեսպան Պալմ Կոմսին ,
Գերմանիոյ դեսպան Մոնտէրի Կոմ-
սին , Դաղիոյ դեսպան Տ'Արքուր
մարքիզին , իտալիոյ դեսպան Մէ-
նապրէս զօրավարին և 'ի վերջոյ Անդ-
ղիտի արտաքին գործոց նախարար
Լորտ Սալիզաբրիի հետ տեսակցե-
ցաւ , և ամենն ալ մեծ պատուով և
համակրութեամբ ընդունեցին . Ն.
Սրբազնութիւնն և յաւաստեցին որ
ինչ բարենորոգումներ կամ առանձ-
նաշնորհութիւնք տրուին Բուսթիլի
քրիստոնէից , նոյնը պիտի տրուի
և Հայոց , և յորդորեցին զինքը որ
տէրութեանց ժողովին ներկայանայ :

« Անդղիտի խորհրդարանին նշանա-
ւոր ազատական անդամներէն Սըր
Հէնրի Ճէյմս՝ Խորիմեան սրբազանն
երկկողմի մը հրաւիրեց , ուր բազ-
մաթիւ աղնուական տիկնայք՝ ա-
մենքն ալ սքանչելապէս հաղուած՝
Ն. Սրբազնութիւնը տեսնելու փա-
փաքանօք ժողովեալ էին խորհրդա-
րանի բազմաթիւ անդամաց հետ , և
ուր Հայոց և Հայաստանի վրայ եր-
կար խօսակցութիւնք և խորհրդա-
ժողովութիւնք եղան :

« Հետեւեալ օրը Խորիմեան սրբա-
դան 'ի ճաշ հրաւիրեցաւ Լորտերուն
խորհրդարանին գլխաւոր անդամ՝ Ար-
կայիլ դուքսէն , որոյ օրդին թա-
գուհոյն փեսան է :

« Նմանապէս 'ի ճաշ հրաւիրեցաւ
Պ. Կլաւտիլլէն , որ Արկայիլ դուք-
սին պէս Հայոց խնդրոյն վրայ իւր
ջերմ համակրութիւնն յայտնելէ և
յոռապից խոստումներ տայէ ետեւ ,

արեւելեան ընդուաց և գրականու-
թեան վրայ երկար խօսակցեցաւ Պ.
Մինաս Չերազի հետ , և շատ գոհ
ըլլալով՝ իւր լուսանկար պատկերն
ընծայեց անոր՝ տակն ստորագրու-
թիւնը դնելով . մեծ պատիւ մը , որուն
իրաւամբ արժանի գտնուած է Պ.
Մ. Չերազ :

« Լոնտրայի գլխաւոր Յոյն վաճա-
ռականք և սեղանաւորք և Հելլենա-
կան կառավարութեան դեսպանն այ-
ցելութիւն տուին Խորիմեան Հայրի-
կին , և դեսպանն յանուն Հելլենա-
կան թագաւորութեան յաջորդութիւն
մաղթեց Հայոց :

« Մայիս 13/27ին 'ի ճաշ հրաւիրե-
ցաւ Լորտերուն խորհրդարանին ան-
դամ՝ Հարթ ինթըն մարքիզէն :

« Հետեւեալ օրն ալ երեսփոխանաց
ժողովոյ գլխաւոր անդամներէն Սըր
Ճոն Լըպոքի հետ տեսակցեցաւ ,
նմանապէս այցելութիւն տուաւ Տէն-
դըն եպիսկոպոսին , որ զինքն առաւ
անդղիտական եկեղեցին տարաւ և
հան իւր օրհնութիւնը խնդրեց ժողո-
վրդեան վրայ :

« Մայիս 18/30ին օրն ալ Գերմանի-
ոյ դեսպատականք ինթանին հետ պի-
տի տեսակցէր : »

Ա Ջ Դ Բ .

1880 ՏԱՐԵՂԱՐՁԻ ԱԶԴԱՅԻՆ ՍԱՀ-
ՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ազգային Սահմանադրութեան 1880
տարեդարձի հանդէսը պիտի կատարուի
ընդ նախադասութեամբ Ամեն . Ս . Պատ-
րիարք հօր յազգային Հիւանդանոցի՝ յա-
ռաժիկայ կիւրակէ մայիս 28 :

Սոյն հանդիսին համար կազմուած մաս-
նաժողովը պիտի ունի ծանուցանել մե-
ծարդոյ հասարակութեան թէ ,

1. Կիւրակէ առաւօտ ժամ 11ին հան-
դիսաւոր Ս . պատարագ պիտի մատու-
ցանէ Իզմիրեան Գեր . Տ . Մատթէոս Սըր-
բազան Ս . Փրկչի եկեղեցւոյ մէջ :

2. Ժամ 11ին ճաշի սկիզբ պիտի ըլլայ .

3. Ճաշի տոմար ունեցողներն տոմարի
'ի ձեռքին պատրաստ պիտի ունենան , որ-
պէս զի սեզանի հրաւիրուին .

4. Հանգիստալոյքը մտնելու համար
թէ արք և թէ տիկնայք մտից տուրք պի-
տի վճարեն 5 զրջ ողջ թղթադրամ :

5. Ոչ որ ատենաբանելու ուղէ , կանխաւ
պիտի իմացնէ մասնաժողովոյ :

6. Մասնաժողովոյ կողմանէ տեսուչներ
որոշուած են , որք պիտի հսկեն հանդի-
սին բարեկարգութեան և կանոնաւորու-
թեանը համար :

1878 մայիս 24 Ի դիմաց մասնա-
Գրաս . Հիւան . ժողովոյ 1880 Տար .
Սենթեթէ՝ Մ . Մանուկեան



Այս չարթու Կ . Պոլոյ Հայ երկրոր-
տարդութեան ընտիր ծաղիկներէն
մին խափնեցաւ :

Տիգրան Եֆէնտի խորտանաճեան ,
աղնիւ և հանճարեղ պատանի մը ,
որ խոսքի զի նուազոր Ծահաղար-
եան վարժարանին մէջ ուսմանքն
աւարտելէ ետք՝ փարիզ գնացած էր
բարձրագոյն դիտութեանց պարա-
պելու , և էքօլ Սանթրուալ կոչուած
մեծ վարժարանին ուսմանքին տաւոր-
տիւնով վիճականն ստանալու վրայ էր ,
անագործն հիւանդութիւն մը վրայ
հասնելով , իւր պոյժաւ ապագային
յոյսերուն հետ և քսաներկամեայ
ծաղիկ կենաց լծելը խղեց , 'ի խոր
սուգ ընկզմով խորտանաճեան և
փրկման բարեհաճութեամբ գերգաս-

տաններն , որոց պարձանքներէն մին
ըլլայ կը խոստանար :

Յու զարկաւորութիւնն Հինգշաբ-
թի օրը կատարեցաւ մեծ հանդիսիւ
յորթաքիզ , ուստից մարմինը խա-
գիւղ տարուելով՝ իւր ազգատոհմին
դամբարանն ամփոփեցաւ :

Ոչ նուազ սրտի ցաւով կը ծա-
նուցանենք նաեւ թէ՛ լրագրոյս Ռո-
տտիօի հոգաբարձու Յովակիմ է-
ֆէնտի Ուղղակարութեան աղնուաբա-
րոյ և տաղանդաւոր երկրորդարդ-
ժանտառներէի դժբաղակ հիւանդու-
թեանէն բուժուելով ամառոյ 17ին իւր
մահկանացուն կնքեց է 'ի հասակի
33 տմաց , յանձնարար սուգ և 'ի
դժբաղութիւն իւր ծաղկահասակ
լճակցին և երկու դեռափթիթ զա-
ւակացն :

Այս գոյժը մեզ տուող նամակը կը
ծանուցանէ թէ յուղարկուողութեան
հանդիսին ներկայ գտնուել են՝ ազ-
գայնոց խումն բաղմութենէ զատ նա
և կառավարութեան բարձրաստիճան
պաշտօնատարներէն շատերն , որով-
հետեւ հանգուցեալ Յովակիմ էֆէն-
տի Հայերէն Տաճկերէն և Յունարէն
լեզուաց քաղաքագիտութեան պատ-
ճառաւ Ռոտտիօի արգի կառավա-
րութեան մէջ դիւանադպրութեան
պաշտօն կը վարէր , որով ոչ միայն ազ-
գայնոց՝ այլ և օտարազգեաց ալ սէրն
ու համարումը գրաւած էր :

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՔ ՄՍՍԻՍ ԼՐԱՐՈՅ

. . . Եֆէնտի .

Մինչեւ վաճառուեցաւ , հարուստ վա-
ճառականներով և քիչ ու շատ բարեկարգ-
եալ դպրոցներով չքնաղ հարսի մը նման
պճնազարդեալ կը խայտար , յանդիմ
զիւրուան մէջ չգիտեմ որ անագործն
ձեռք վեր 'ի վայր յեղաշրջեց այս բոլոր
բարեմասնութիւններն 'ի հուր և յաճինս
թաթաւեալ : Այս թշուառ ժողովուրդն
կրկ յանդիմ իւր աչքերը բացաւ , ինք-
պիքը հրալից մոլորոյ կոյտի մը վրայ տե-
սաւ . հարբածի մը նման ձեռքերն ու
ոտքերն աստ անդ ձգելով՝ շինական եղ-
բօր հաց , հաց կանչելով կը մորմոքէր :
Հուսկ ուրեմն յեղաշրջեց պատերազմի մը
փոթորիկը փրթելով՝ զայն ալ իրեն նման
ուրուական վրայ նստեցուց :

Ինչ էր արդեօք հոր ճարակ եղած
այս նիւթը . ասիկա հարստահարեալ ժո-
ղովուրդի մը նիւթական ու բարոյական
կեանքն էր , զոր անխնայ խնց թնամ-
ւոյն անողոր ձեռքը , այս դիւրագիտ ժո-
ղովուրդը որոյ յոյսը մի միայն դպրոցաց
վրայ էր , մոռնալով նիւթական հասցը ,
յուշ երբ բարոյականը , որ այնուհետեւ ալ
պահեցաւ իւր որդւոց բերնէն . այն է
հոր ճարակ եղաւ ու չորացաւ եկամտից
աղբիւրներ , որով դպրոցներ իսպառ գոց-
ւելու վիճակի մէջ ինկան : Ահա այս ժո-
ղովուրդ սոյն աղետից մէջ ամեն ուստեք
յուսակտուր եղած կը զլուխ առ առատա-
սիրտ ազգային Բիւզանդիոնի , որ փու-
թան բեկեալ Վանեցոյն օգնութեան աջ
կարկառել , այն է իւր քաղաքի միջի Յի-
սուսեան և Շուշանեան երկսեւ վարժա-
րաններ , որոց մէջ չորս հարիւրէն աւելի
աշակերտք կը պարուսակին՝ վերստին
կանգնել իւր աւերակաց աճիւններէն ,
զորս ազգը պաշտօնապէս յանձնեց ըն-
թերցարարաց Անդրանիկ ընկերութեան
տեսչութեան :

Ուստի , . . . խմբագիր , դուք՝ որ ազ-
գային յառաջդիմութեան նախանձա-
խնդիրներէն էք , մի՛ յաղաղէք հրաւի-
րել ազգատէր ազգայնոց ուղադրութիւնը
մեր որդւոյ վիճակին վրայ : Այս մասին
Ամեն . Խորիմեան Սրբազան Հայրերի տես-
չութեան տակ գործակատար ընտրած
եմք մեր Վանեցի վաճառականներէն Նա-
թանեան Մեծ . Մ . Յարութիւն , Պապիկ-
եան Մեծ . Վարդան , Զմէշի Փանոսեան
Մեծ . Յարութիւն և Հայրապետեան Կա-
րապետ աղա , որոց ձեռամբ ինչոյ մեզ
հասնիլ 'ի նպատակ Վանայ երկսեւ վար-
ժարանաց հաւաքեալ դրամք :

Այսու , . . . տէր , յաւերժ երախ-
տապարտ պիտի կապուցանէք այն ուսում-
նազուրկ մանկուկը , որք այսօր ազգա-
նոց առատաձեռնութեան կը կարօտին :
Ուրեմն հաճեցէք , ազգասէր խմբագիր ,
ձեր բազմադիւն թերթի մէջ մի անկիւն
չնորհել սոյն երկուող գրութեանս , յըն-
թերցումն դպրոցասէր ազգայնոց , և մի-
անգամայն ձեր կողմանէ ևս՝ յորդոր կար-
գալ ամեն անոնց՝ որք ազգային մանկըտ-
ւոյն յուսմունս յառաջդիմել կը ցան-
կան 'ի սրտէ : Մնամք ձեզ և առա-
'ի Վան տաղութ ազգայնոց յաւիտ-
6 մարտ 1878 Եանա շնորհապարտ
Անդամք Ընթ . Անդր . Ընկ .
(Կնէս)

Տեղւոյս դաւառական ազգային ժողո-
վոյ որդւմար Գիւստանեան և Շուշանեան
գաղութիւններէն և արտաքին բարեկար-
գութիւնը Ընթերցարարաց Անդրանիկ ըն-
կերութեան յանձնուած է . ընդ նմին նա
և ամեն կողմի ազգատէր Հայերէն նպատ-
խնդրել բերել , և յիշեալ վարժարանը
բաց պահել և շարունակել :

Պատր . Ժոխ . Վասսուր-
բականի
Երեմ . Եֆէնտի

Ա. Վերապատուելի Հ . Վ . Վ . Ե .
'ի Պրաշով .

Վերապատուելի Տէր .

Մասիս պատուական լրագրոյ մէջ ա-
ղա Յակոբ Ֆէրհատեանցի կերպարանը
վը դիմաւորեալ ձեր դէմքը տեսանք
ու ճանչցանք :

Թէպէտ և ոչ ձեր վերապատուութիւն-
նը և ոչ աղա Յակոբ Ֆէրհատեանցը ճան-
չելու պատիւը չունիմ , բայց եկեղեցւոյ
բեմնասաց մը և հրապարակի վաճառա-
կան մը խօսքէն ու ձայնէն ճանչելը գրծ-
ւար բան մը չէ :

Պարզ ժողովուրդեան մ'առջև բեմնա-
ստացութիւն խօսիլը և հրապարակագրա-
կան ասպարիզին վրայ քննադատութիւն
ընելը մէկ մէկէ շատ հեւի են . . . :

Մեր « Ճիշդ Հաւելի » խորագրով
դիմաւորութիւնը կը քննադատէք , և կը
պահանջէք որ իւր բանաստեղծութիւն
ծաղկանց ու թուշոց մէջէն ընտրուէր իւր
նիւթը : Ներեցէք որ Ձեզի գիտել տամ
թէ՛ այլ է սիրոյ , հիացման , հուշոյ , սար-
սափի , հեծեծանոց , ըղձու եւ . բա-
նաստեղծութիւնը , — թէ՛ աս ալ միմիայն
ծաղկունք կամ թուշունք նիւթ ունենալ
հնարաւոր ըլլայ ըստ ձեր պահանջման , —
և այլ է դիմաւորութիւնը , զոր բացատ-
րել՝ կարծեմ թէ՛ ոչ պատահութիւնը և
ոչ Մասիս պատուական լրագրոյ սուղ է-
ջերը չեն ներեր տոտր . բայց կարճ խօս-
քով կըսենք թէ , դիմաւորութիւնը , ար-
ձակ թէ աղաքափեալ , գրականութեան
մէջ ճանչցուած նկարագրութեան ձե-
մի է :

Մեզի կը հայհոյէք . . . զմեզ կը փոռ-
մալ և զրպարտիչ ցուցնել կուզէք առանց
փաստի . կըսէք թէ պակասութիւնը սըր-
դած չենք , իրեւ թէ պակասութիւնը սըր-
դելը առաքելութիւն մը , բարիք մ'ըլլայ
մանաւանդ՝ երբ զրոյն օտարը գանի տես-
նեն ու զընտանիս (տնեցիները) բամբա-
սեն , և ընտանիները տեղեկութիւն չու-
նենան : Բայց մենք պակասութիւնը դեռ
մեր հրապարակն հանած չէինք , և թէ՛
պէտ Ձեր կրօնամոլութիւն և զրպարտու-
թիւն բաղադրող հակասութիւններն ար-
դէն ինքնին հերքուած էին , բայց ինչ
իրաւամբ՝ առանց մեր պատասխանին՝ ձեր
այդ զրպարտիչ զրպարտութիւնը մօտ օ-
րերս նորէն կրկնելիք հասկցած չեմ :

Միանգամ ընդ միտ կը վերջացնեմ
այս մասին առ ձեզ ուղղած խօսքս , յու-
սալով որ ուրիշ անգամ դիմաւոր գրա-
ւոր բեմնաստացութիւն ըրած ատենիդ՝
զոնէ՛ ո՛ր և որո՛ւ խօսելիք կը յիշեք ,
երբ ներկայանաք հասարակաց կարծեաց
ատենին : Որում մնամ միտ անձնուէք
14 մայիս 1878 Գ . Մ . Է .
Ֆօքլան

* Սոյն նամակին հեղինակն անցեալ-
ները պատասխան մը գրած էր , բայց
մեք երկարութեանը պատճառաւ չէինք
հրատարակած : (Ման . Խմբ .)
